ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՐԹՈՒԹՅԱՆԵՎԳԻՏՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԵՎՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙУНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫИСТРОИТЕЛЬСТВА
nАРМЕНИИ

ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА
ОБРАЗОВАНИЯ

MINISTRY OF EDUCATION AND
SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONALUNIVERSITY OF
ARCHITECTURE AND CONSTRUCTION OF
ARMENIA

CENTER OF EDUCATION QUALITY
ASSURANCE

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. մայիս ամսվա ընթացքում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) ավարտող ուսանողների հարցման արդյունքների վերաբերյալ

1. Նախաբան

ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Որակի կենտրոն) 2017 թվականի մայիս ամսին անցկացրել է հարցում՝ համալսարանի ավարտող ուսանողների շրջանում:

Հարցման նպատակն էր.

1. պարզել, թե համալսարանն ավարտող ուսանողները որքանով են բավարարված համալսարանի՝
   - կրթական գործընթացների կազմակերպմամբ և որակով,
   - ստացած գիտելիքների, կարողությունների, հմտությունների, մակարդակով,
   - մատուցած ծառայությունների որակով,
2. բացահայտել շրջանավարտների վերաբերմունքն իրենց հետագա կրթության կամ աշխատանքի վերաբերյալ:

Հարցումն իրականացվել է նախապես մշակված և որակի կենտրոնի կողմից հաստատված հարցաթերթի հիման վրա: Հարցում իրականացնելու համար մշակված հարցաթերթը պարունակում է 45 հարց, (տես՝ Հավելված 1), որից 9-ը հանդիսանում են ընդհանուր բնույթի, 32-ը՝ կրթական գործընթացները և ծառայությունների որակը գնահատող և 4-ը՝ ապագա աշխատանքային կամ ուսումը շարունակելու հեռանկարները գնահատող:

2. Հարցվողների ընտրանիի ընդհանուր տվյալները

Հարցվողներին վերաբերող վիճակագրական տվյալները բերվծ են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ընտրանիում ներառված ավարտող ուսանողների բաշխումը

Ֆակուլտետ	Ավարտող ուսանողների թիվը	Մասնակից ուսանողների թիվը	Մասնակից ուսանողների %-ը
Ճարտարապետության ֆակուլտետ	75	40	53%
Դիզայնի ֆակուլտետ	106	87	82%
Շինարարության ֆակուլտետ	48	33	69%

0009 Երևան, Տերյան105,
0009 Yerevan, Teryan 105,
0009 Ереван, Терян 105

Tel: /Fax: (+374 10) 58.37.73
E-mail: vhovhannisyan@nuaca.am

Քաղ. տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետ	35	35	100%
Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետ	51	51	100%
Ընդհանուր	**309**	**248**	**80%**

3. Կրթական գործընթացների գնահատումը

Հարցաթերթիկի երկրորդ հատվածում ներկայացված են համալսարանի կրթական գործընթացին վերաբերող հարցեր, որոնք՝ հարցման մասնակից ուսանողները, գնահատել են 1-3 բալային համակարգով, որում 1 միավորին համապատասխանում են «Համաձայն եմ», 2 միավորին՝ «Մասամբ համաձայն եմ» և 3 միավորին՝ «Համաձայն չեմ» պնդումները: Գնահատման արդյունքները (Աղյուսակ 2) ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են կրթական գործընթացներից: Ինչպես երևում է ստորև ներկայացվող աղյուսակ 2-ի տվյալներից, ուսանողներն ամենաշատը համաձայն են «Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/ կրթական ծրագիրը իմ բուհում» դրույթին, որի միջին գնահատականը **1.21 միավոր է**: Համեմատաբար ավելի ցածր գնահատական է տրվել նաև հարցաթերթիկի «Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն» պնդմանը՝ **1.26 միավոր**: Ուսանողներն ամենաքիչը համաձայնել են «Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից » պնդմանը՝ միջին գնահատակը **1.57 միավոր,** և «Իմ կրթական ծրագիրն ինձ հնարավորություն է տվել դառնալու բարձր որակավորում/պահանջարկ ունեցող մասնագետ»՝ միջին գնահատականը՝ **1.50 միավոր**:

Աղյուսակ 2. Կրթական գործընթացների գնահատման արդյունքները

ՀՀ.		Միջին գնահատականը	Համաձայն են	Մասամբ համաձայն են	Համաձայն չեմ
10	Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով	1.40	49.6%	43.0%	7.5%
11	Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից	***1.57***	44.5%	48.5%	7.0%
12	Իմ կրթական ծրագիրն ինձ հնարավորություն է տվել դառնալու բարձր որակավորում/պահանջարկ ունեցող մասնագետ	1.50	49.1%	38.9%	11.9%
13	Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների, պահանջների, վերջնարդյունքների մասին	1.40	51.3%	32.9%	15.8%
14	Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար	1.32	61.1%	31.4%	7.5%
15	Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն	1.26	65.6%	27.2%	7.1%
16	Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ	1.40	55.8%	32.6%	11.6%
17	Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/ կրթական ծրագիրը իմ բուհում	***1.21***	64.8%	22.9%	12.3%
18	Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների բնագավառում	1.30	64.0%	26.2%	9.8%

Հաշվարկվել են նաև ուսանողների՝ ըստ ֆակուլտետների, ներկայացրած պատասխանները: Վերլուծության արդյունքներից երևում է, որ համալսարանական միջին ցուցանիշից առանձին ֆակուլտետների միջին ցուցանիշները մեծ շեղումներ ունեն (Աղյուսակ 3): Մասնավորապես. «Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով» դրույթի միջին գնահատականը **1.40 միավոր է**, մինչդեռ շինարարության ֆակուլտետի գրեթե բոլոր շրջանավարտներն այս պնդման

համար բարձր գնահատական են տվել՝ միջին գնահատականը՝ **1.1 միավոր**, իսկ ճարտարապետության ֆակուլտետում պատկերը հակառակն է. Ֆակուլտետում այս պնդման համար տրվել է ամենացածր գնահատականները՝ միջին գնահատականը՝ **1.8 միավոր**: Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, համալսարանում իրենց կրթական ծրագրից բավարարված չեն նաև քաղաքային տնտեսության և էկոլոգիայի (միջին գնահատականը՝ **1.7 միավոր**), ինչպես նաև Կառավարման և տեխնոլոգիայի (միջին գնահատականը՝ **1.6 միավոր**), ֆակուլտետների շրջանավարտները:

Կրթական գործընթացների գնահատման կառուցամասի հաջորդ՝ «Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից» դրույթին (ամենացածր միավոր ստացած դրույթը) գնահատականներից երևում է, որ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից առավել դժգոհ են ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.78 միավոր**):

«Իմ կրթական ծրագիրն ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ունեցող մասնագետ» դրույթին ամենացածր գնահատականը տվել են ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.9 միավոր**): Ի տարբերություն ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների, շինարարության ֆակուլտետում գրեթե բոլոր ուսանողների գնահաատմամբ իրենց կրթական ծրագիրը հնարավորություն է տվել դառնալու բարձր որակավորում ունեցող մասնագետ: Իրենց կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից դժգոհ են նաև դիզայնի ֆակուլտետի ուսանողները:

«Ես ժամանակին լիովին տեղեկացել էի իմ կրթական ծրագրի նպատակների ու վերջնարդյունքների մասին» դրույթին ամենաբարձր գնահատականը տվել են շինարարության ֆակուլտետի (միջին գնահատականը՝ **1.1 միավոր**) իսկ ամենացածր գնահատականը՝ Կառավարման ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **2.0 միավոր**):

«Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար» դրույթին ամենաբարձր գնահատականը տվել են շինարարության (միջին գնահատականը՝ **1.1 միավոր**) և քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.3 միավոր**), իսկ ամենացածր միավորը՝ ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.7 միավոր**):

«Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն» դրույթին ամենաբարձր գնահատականն են տվել շինարարության ֆակլուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.2 միավոր**), իսկ մյուս բոլոր ֆակուլտետներում գրեթե նույն պատկերն է՝ միջին գնահատական: Այսուհանդերձ, ամենացածր գնահատականն այս հարցին տվել են ճարտարապետության (միջին գնահատականը՝ **1.6 միավոր**) Կառավարման և տեխնոլոգիայի (միջին գնահատականը՝ **1.5 միավոր**) ֆակուլտետների ուսանողները:

«Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ» դրույթին ֆակուլտետների ուսանողները միջինից ցածր գնահաատական են տվել: Ընդ որում, ամենացածր գնահատականը տվել են **ճարտարապետության ֆակուլտետի** ուսանողները (միջին գնահատականը՝ **1.8 միավոր**):

«Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/կրթական ծրագիրը իմ բուհում » դրույթին ամենաբարձր միավորը տվել են շինարարության ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.1 միավոր**): Ի տարբերություն շինարարության ֆակուլտետի շրջանավարտների, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանողներն ապագա ուսանողներին ընդհանուր առմամբ խորհուրդ չեն տա ընտրելու այս մասնագիտությունը (միջին գնահատականը՝ **1.7 միավոր**):

«Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների մեջ» դրույթին ամենաբարձր գնահատականն են տվել շինարարության ֆակուլտետի ուսանողները՝ **1 միավոր,** իսկ ամենացածր գնահատականը տվել են Կառավարման ֆակուլտետի ուսանողները (միջին գնահատականը՝ **1.7 միավոր**):

Կրթական ծրագրերին տրված գնահատականները գրեթե նույնն են բակալավրիատի/մագիստրատուրայի և առկա/հեռակա ուսանողների մոտ, չնչին բացասական տարբերությամբ մագիստրատուրայի և հեռակա ուսանողների համար:

Աղյուսակ 3. Կրթական գործընթացների գնահատումն, ըստ առանձին ֆակուլտետների

Հ.	Պնդումներ	Միջին գնահատականը	Դիզայնի ֆ.	Ք. տնտ. և էկ. ֆ.	Կառավ. և տ. ֆ.	Ճարտարապ. ֆ.	Շինարարության ֆ.
10	Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով	**1.4**	1.5	1.7	1.6	1.8	1.1
11	Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից	**1.6**	1.6	1.6	1.6	1.8	1.4
12	Իմ կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ունեցող մասնագետ	**1.5**	1.7	1.7	1.6	1.9	1.1
13	Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների և վերջնարդյունքների մասին	**1.4**	1.6	1.6	2.0	1.8	1.1
14	Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար	**1.3**	1.5	1.3	1.5	1.7	1.1
15	Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն	**1.3**	1.4	1.4	1.5	1.6	1.2
16	Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ	**1.4**	1.6	1.6	1.6	1.8	1.2
17	Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/կրթական ծրագիրը իմ բուհում	**1.2**	1.5	1.6	1.7	1.3	1.1
18	Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների մեջ	**1.3**	1.4	1.6	1.7	1.5	1.0

Հարցման մասնակիրցները ներկայացրել են կրթության որակի բարելավմանն ուղղված, թվով 149 առաջարկներ, որոնք՝ խմբավորված ներկայացվում են ստորև:

Առաջարկները	**Հարցվածների որ տոկոսն է կարևորել**	**Հարցված ուսանողների թիվը**	**Ֆակուլտետը**
1. Կարողանայինք շփվել	6.7%	77	Դիզայն
2. Կապը մեծ լիներ գործատուների, արտադրող ընկերությունների հետ:	2.7%	77	Դիզայն
3. կապը պրակտիկայի հետ	19.5%	40	Ճարտարապետություն
4. տպագրությունը կատարի բուհը	2.0%	40	Ճարտարապետություն և դիզայն
5. թեմաներն ավելի հետաքրքիր լինեին	0.7%	69	Կառավարման և տեխնոլոգիայի
6. համակարգիչները լավը լինեն/ տեխնիկական հագեցվածություն	11.4%	35	Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի
7. բավարար է	3.4%	77	Դիզայն
8. երիտասարդ դասախոսների մասնագիտական որակներն ավելի բարձր լինեին	7.4%	35	Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի
10. դասախոսները հստակ առաջադրանքներ տան	0.7%	77	Դիզայն
11. վարձավճարը փոքրացնեն	2.0%	77	Դիզայն
12. գնահատման համակարգը դուրս գա	0.7%		դիզայն
13. ավելի շատ աշխատեի	0.7%	35	Քաղաքային

			տնտեսության և էկոլոգիայի և դիզայնի
14. կրթության որակը բարելավվի	18.1%	69	Կառավարման և տեխնոլոգիայի
15. համակարգչային ծրագրերը մի քիչ երկար ուսուցվեն	8.1%	40	Ճարտարապետության
16. նախագծի կատարման ժամկետները երկարացվեն	0.7%	77	Դիզայն
17. շատ լինեն բաց դասեր, հյուրեր	1.3%	77	Դիզայն
19. չթելադրեին	2.7%	69	Կառավարման և տեխնոլոգիայի
20. գրքեր, գրադարան	3.4%	69	Կառավարման և տեխնոլոգիայի
21. չկոտրեին նախասիրություններս, անկողմնակալ լինեին	4.0%	69	Կառավարման և տեխնոլոգիայի
22. միջազգային կապեր	2.0%	27	Շինարարության
Ընդամենը	**100%**		

Ընդ որում, ներկայացված առաջարկներն ըստ ֆակուլտետների խմբավորելիս պարզ է դառնում, որ շրջանավարտների առաջարկների մեջ կարևոր տեղ ունի պրակտիկայի հետ կապի ընդլայնումը: Այս առաջարկը ներկայացրել են բոլոր ֆակուլտետների ուսանողները, բայց առավել կարևորում են ճարտարապետության և շինարարության ֆակուլտետների ուսանողները: Դասախոսների հետ անմիջական շփման առաջարկ են ներկայացրել առավելապես դիզայնի, քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետների ուսանողները: Հարցման մասնակիցները կարևորում են նաև ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ առաջադրանքների հստակեցումը, առարկայական ծրագրերի հստակեցումը և համապատասխանեցումն իրենց ընտրած կրթական ծրագրին: Այս առաջարկն առավելապես ներկայացրել են Կառավարման և տեխնոլոգիայի, ինչպես նաև քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները: Դիզայնի և քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ իրենց ուսումնառության արդյունավետության համար կարևորել են նաև իրենց անհատական աշխատանքը: Հարկ է նշել նաև, որ ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների մեծ մասն առաջարկում է ավելի մեծ ուշադրություն դարձնել և ավելի երկար ժամանակ հատկացնել համակարգչային ծրագրերի ուսուցմանը:

4. Ստացած կարողությունների և հմտությունների գնահատում

Ավարտող ուսանողները գնահատել են նաև, թե որքանով է համալսարանի՝ իրենց կրթությունը նպաստել իրենց մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը: Ստորև՝ Աղյուսակ 4-ում ներկայացված են հարցվածների ընդհանուր գնահատականները ստացած կարողությունների և հմտությունների վերաբերյալ.

Աղյուսակ 4. Ստացած կարողությունների և հմտությունների գնահատման արդյունքները

ՀՀ.	Կարողություններ և հմտություններ	Միջին գնահատականը	Համաձայն են	Մասամբ համաձայն են	Համաձայն չեն
20	Նախագծում	**1.5**	63%	28%	9%
21	Տվյալների հավաքագրում և վերլուծություն	**1.5**	52%	40%	8%
22	Համակարգչային ծրագրերի օգտագործում	**1.6**	43%	41%	16%

23	Նախագծի կառավարում (մենեջմենթ)	**1.9**	33%	44%	22%
24	Առաջնորդություն	**1.7**	39%	48%	13%
25	Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում	**1.7**	46%	40%	14%
26	Հաղորդակցություն և հրապարակային ելույթ	**1.7**	43%	39%	18%
27	Գրավոր շարադրանք	**1.8**	41%	41%	18%
28	Օտար լեզվով հաղորդակցություն	**2.0**	29%	40%	32%

Համաձայն Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալների հարցվածները գտնում են, որ համալսարանում իրենց կրթությունը հիմնականում նպաստել է հետևյալ կարողությունների և հմտությունների զարգացմանը.

- նախագծում (հարց հ. 20, միջին գնահատական՝ 1.5, **Համաձայն են՝ 63%**),
- Համակարգչային ծրագրերի օգտագործում (հարց հ. 22, միջին գնահատական՝ 1.6, **Համաձայն են՝ 43%**)
- Տվյալների հավաքագրում և վերլուծություն (Հարց հ. 21, միջին գնահատական՝ 1.5, Համաձայն են՝ 52%)
- Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում (հարց հ. 25, միջին գնահատական՝ 1.7, **Համաձայն են՝ 46%)**
- Առաջնորդություն (հարց հ. 24, միջին գնահատական՝ 1.7, **Համաձայն են՝ 39 %**)

Միևնույն ժամանակ, հարցմանը մասնակցած շրջանավարտները համաձայն չեն, կամ միայն մասամբ են համաձայն, որ համալսարանական կրթությունը նպաստել է իրենց հետևյալ կարողությունների և հմտությունների զարգացմանը.

- Օտար լեզվով հաղորդակցություն (Հարց հ. 28, միջին գնահատական՝ 2.0, Համաձայն չեն՝ 29%)
- Հաղորդակցություն և հրապարակային ելույթ (Հարց հ. 28, միջին գնահատական՝ 1.7, Համաձայն չեն՝ 43%)
- Գրավոր շարադրանք (Հարց հ. 27, միջին գնահատական՝ 1.8, Համաձայն են՝ 41%)
- Նախագծի կառավարում/Մենեջմենթ (Հարց հ. 23, միջին գնահատական՝ 1.9, Համաձայն են՝ 33%)

Ասվածից հետևում է, որ շրջանավարտները հատկապես դժգոհում են համալսարանում օտար լեզվով հաղորդակցության և հրապարակային ելույթ ունենալու հմտություններ ձեռք բերելու հնարավորություններից:

Վերլուծությունն իրականացվել է նաև ըստ ֆակուլտետների, ընդ որում, ֆակուլտետային միջին ցուցանիշների միջև որոշակի տարբերություններ կան: Այսպես.

- Նախագծում-ամենացածր գնահատականը տվել են քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտները՝միջին գնահատականը՝ 1.9: ֆակլուլտետի, իսկ ամենաբարձր գնահատած՝ շինարարության ֆակուլտետի (միջին գնահատականը՝ 1.1) ցուցանիշները էապես տարբերվում են:
- Համակարգչային ծրագրերի օգտագործում-ամենացածր գնահատականը տվել են Ճարտարապետության և քաղաքային տնտեութան և էկոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ համապատասխանաբար 2.2 և 1.9 միավոր:
- Նախագծի կառավարում-ամենացածր գնահատականը տվել են Ճարտարապետության և քաղաքային տնտեութան և էկոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ համապատասխանաբար 2.3 և 2.1 միավոր:
- Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում-ամենացածր գնահատականը տվել են Ճարտարապետության և կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ համապատասխանաբար 2.1և 1.7 միավոր:
- Հաղորդակցություն և հրապարակային ելույթ-ամենացածր գնահատականը տվել են Ճարտարապետության և կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ համապատասխանաբար 2.2 և 1.8 միավոր:
- Գրավոր շարադրանք- ամենացածր գնահատականը տվել են Ճարտարապետության և կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտները՝ համապատասխանաբար 1.9 և 2.2 միավոր:
- Օտար լեզվով հաղորդակցություն-ցածր են բոլոր ֆակուլտետների գնահատականները, սակայն

ամենացածր գնահատականները տվել են ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետների շրջանավարտները:

Աղյուսակ 5. Ստացած կարողությունների և հմտությունների գնահատումն, ըստ չափանիշների

ՀՀ.	Կարողություններ և հմտություններ	Միջին գնահատականը	Դիզայնի ֆ.	Ք. տնտ. և էկ. ֆ.	Կառավ. և տ. ֆ.	Ճարտարապ. ֆ.	Շինարարության ֆ
20	Նախագծում	**1.4**	1.4	1.9	1.5	1.3	1.1
21	Տվյալների հավաքագրում և վերլուծություն	1.5	1.5	1.6	1.6	1.7	1.2
22	Համակարգչային ծրագրերի օգտագործում	1.6	1.6	1.9	1.7	2.2	1.3
23	Նախագծի կառավարում (մենեջմենթ)	1.9	1.8	2.1	1.8	2.3	1.4
24	Առաջնորդություն	1.7	1.7	1.7	1.8	2.0	1.3
25	Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում	1.7	1.7	1.5	1.7	2.1	1.2
26	Հաղորդակցություն և հրապարակային ելույթ	1.7	1.6	1.7	1.8	2.2	1.5
27	Գրավոր շարադրանք	1.8	1.7	1.4	1.9	2.2	1.5
28	Օտար լեզվով հաղորդակցություն	**2.0**	2.1	1.9	1.9	2.3	1.8

5. Բուհական ծառայությունների գնահատումը

Հարցմանը մասնակցած շրջանավարտները գնահատել են նաև համալսարանի կողմից մատուցած ծառայությունների որակը: Ստորև, Աղյուսակ 6-ում ներկայացված են մատուցված ծառայություններին՝ հարցվածների կողմից տրված ընդհանուր գնահատականները.

Աղյուսակ 6. Բուհական ծառայությունների գնահատման արդյունքները

ՀՀ.	Բուհական ծառայություններ	Միջին գնահատականը	Հանձնային են	Մասամբ հանձնային են	Հանձնային չեն
29	Լսարանային պայմաններ և սարքավորումներ	**1.2**	55%	33%	13%
30	Համակարգչային լաբորատորիաներ, ինտերնետ, էլ. փոստ	**1.6**	50%	37%	13%
31	Կարիերայի կենտրոնի աջակցություն՝ աշխատանք գտնելու գործում	**2.1**	31%	30%	39%
32	Ֆինանսական աջակցություն, ներառյալ՝ կրթաթոշակներ, զեղչեր	**1.8**	40%	37%	24%
33	Գրադարան	**1.7**	45%	38%	18%
35	Բուֆետ	**2.2**	38%	30%	32%
36	Տրանսպորտ	**1.9**	32%	31%	37%
37	Մեքենայի կայանատեղի	**2.0**	34%	37%	30%
38	Առողջապահական ծառայություններ	**2.0**	36%	41%	23%
39	Մշակութային և այլ միջոցառումներ	**1.9**	41%	39%	20%
40	Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,	**1.8**	40%	35%	25%

Համաձայն Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների, հարցման մասնակիցները գոհ են

համալսարանի կողմից մատուցած հետևյալ ծառայությունների որակից.

- Լսարանային պայմաններ և սարքավորումներ (հարց հ. 29, միջին գնահատական՝ 1.2, Համաձայն են՝ 55%),
- համակարգչային լաբորատորիաներ (հարց հ. 30, միջին գնահատական՝ 1.6, Համաձայն են՝ 50%)
- գրադարան (հարց հ. 29, միջին գնահատական՝ 1.7, լիովին Համաձայն են՝ 45%),

Միաժամանակ, հարցմանը մասնակցած շրջանավարտները դժգոհում են.

- բուֆետից (հարց հ. 35, միջին գնահատական՝ **2.2**, դժգոհ են՝ 38%)
- մեքենայի կայանատեղիից (հարց հ. 37, միջին գնահատական՝ 2.0, դժգոհ են՝ 34%),
- առողջապահական ծառայություններից (հարց հ. 38, միջին գնահատական՝ 2.0, դժգոհ են՝ 36%)
- Կարիերայի կենտրոնի աջակցությունից (հարց հ. 31, միջին գնահատական՝ 2.1, դժգոհ են՝ 31**%**)
- տրանսպորտից (հարց հ. 36, միջին գնահատական՝ 1.9, դժգոհ են՝ 32%),

Հարցմանը մասնակցած շրջանավարտները միջին գնահատականներ են տվել ֆինանսական աջակցություն, ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ ինչպես նաև մշակութային և այլ միջացառումները ներկայացնող հարցերին:

Աղյուսակ 7. Բուհական ծառայությունների գնահատումն, ըստ չափանիշների

ՀՀ.	Բուհական ծառայություններ	Միջին գնահատականը	Դիզայնի ֆ.	Ք. տնտ. և էկ. ֆ.	Կառավ. և տ. ֆ.	Ճարտարապ. ֆ.	Շինարարության ֆ.
29	Լսարանային պայմաններ և սարքավորումներ	**1.4**	1.4	**2.2**	1.4	1.8	1.3
30	Համակարգչային լաբորատորիաներ, ինտերնետ	**1.6**	1.6	**1.9**	1.5	1.8	1.5
31	Կարիերայի կենտրոնի աջակցություն	**2.1**	2.2	2.3	1.7	**2.5**	1.9
32	Ֆինանսական աջակցություն, ներառյալ կրթաթոշակները, զեղչեր	**1.8**	**1.9**	1.7	**1.9**	1.8	1.7
33	Գրադարան	**1.7**	1.7	1.8	1.7	**1.9**	1.6
35	Բուֆետ, սննդի տրամադրում	**2.2**	1.8	2.0	2.0	**2.4**	1.4
36	Տրանսպորտ	**1.9**	2.2	2.0	1.8	**2.4**	1.7
37	Մեքենայի կայանատեղի	**2.0**	2.1	2.0	1.7	**2.3**	1.5
38	Առողջապահական ծառայություններ	**2.0**	1.8	1.8	1.8	**2.3**	1.5
39	Մշակութային և այլ միջոցառումներ	**1.9**	1.8	1.8	1.9	**2.1**	1.4
40	Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,	**1.8**	1.8	1.9	1.9	**2.2**	1.4

Աղյուսակ 7-ում, ներկայացված են համալսարանի նշված ծառայություններին տրված գնահատականներն ըստ առանձին ֆակուլտետների: Ինչպես երևում է աղյուսակ 7-ի վերլուծությունից, թեև համալսարանի շրջանավարտներն ընդհանուր առմամբ գոհ են լսարանային պայմաններից, սակայն քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտները ցածր գնահատական են տվել: Համալսարանի համակարգչային լաբորատորաներին և ինտերնետ ծառայություններին ևս ամենացածր գնահատականը տվել են քաղաքային տնտեսության ֆակուլտետի ուսանողները: Կարիերայի կենտրոնի աջակցությունից գոհ են կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանողները, ի տարբերություն մյուս բոլոր՝ մասնավորապես ճարտարապետության ֆակուլտետի շրջանավարտների: Համալսարանի տրամադրած ֆինանսական աջակցությունից դժգոհում են դիզայնի և կառավարման ֆակուլտետների շրջանավարտները: Համալսարանում սննդի տրամադրումից դժգոհում են բոլոր ֆակուլտետների շրջանավարտները՝ բացառությամբ շինարարության ֆակուլտետի:

6. Աշխատանքային և ուսումը շարունակելու հնարավորությունները

Ինչպես երևում է ստորև բերվող Աղյուսակ 8-ում ներկայացված տվյալներից, շրջանավարտների 54%-ը՝ համալսարանն ավարտելու պահին ունի աշխատանք (հիմնական աշխատանք՝ 40%, գործարքային հիմունքներով աշխատանք՝ 14%), սակայն հարցման մասնակից շրջանավարտների ճնշող մեծամասնությունը՝ (42%) համալսարանն ավարտելու պահին աշխատանք չունի:

Աղյուսակ 8. Հարց. Դուք աշխատու՞մ եք և ի՞նչ կարգավիճակով

Հարցվածներ	Հիմնական աշխատանք՝ լրիվ կամ կես դրույք	Գործարքային հիմունքներով աշխատանք	Չեն աշխատում
Ընդհանուր	**40%**	**14%**	**42%**
Դիզայնի ֆ.	32.5%	11.7%	44.2%
Քաղ. տնտ. և էկ. ֆ.	14.3%	2.9%	10.3%
Կառավարման և տ. ֆ.	37.5%	16.1%	41.1%
Ճարտարապետության ֆ.	17.5%	25.0%	55.0%
Շինարարության ֆ.	14.8%	25.9%	55.6%

Ընդ որում, համալսարանն ավարտելու պահին հիմնական կամ գործարքային աշխատանք ունեցող ուսանողներն ամենամեծ թիվն ունեն Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետում (37,7%): Ընդհանուր առմամբ պատկերը հետևյալն է.

- Դիզայնի ֆակուլտետ- 44.2%
- Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետ- 17.2%
- Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետ- 53.6%
- Ճարտարապետության ֆակուլտետ-37.2%
- Շինարարության ֆակուլտետ- 40.7%

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր ներկայացնել իրենց պլանները՝ հետագա կրթության և աշխատանքի առումով: Հարցման արդյունքների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հարցման մասնակիցների 29.8%-ը շարունակելու է իր կրթությունը իր բուհում և իր մասնագիտությամբ: Հարցման մասնակիցների 15,3%-ը շարունակելու է իր կրթությունը այլ բուհում և/կամ այլ մասնագիտությամբ: Հարցման մասնակիցների 25,1%-ը փնտրում է աշխատանք՝ միայն իր մասնագիտությամբ, 14,5%-ը փնտրում է այլ մասնագիտությկամբ, իսկ 8,9%-ը աշխատանք չի փնտրում:

Աղյուսակ 9. Ավարտելուց հետո ի՞նչ պլաններ ունեք կրթության կամ աշխատանքի առումով

ՀՀ.	Պլանները կրթության և աշխատանքի առումով	Միջին գնահատականը	Դիզայնի ֆ.	Ք. տնտ. և էկ. ֆ.	Կառավ. և տ. ֆ.	Ճարտարապ. ֆ.	Շինարարության ֆակուլտետ
29	շարունակելու եմ կրթությունս իմ բուհում, իմ մասնագիտությամբ	**29,8%**	22.1%	22.9%	30.4%	22.5%	63%
30	շարունակելու եմ կրթությունս այլ ԲՈՒՀ-ում կամ այլ	**15,3%**	6,5%	22.9%	30.4%	22.5%	

	մասնագիտությամբ						3.7%
31	փնտրում եմ նոր աշխատանք՝ միայն իմ մասնագիտությամբ	**25,1%**	33,8%	22.9%	30.4%	22.5%	22%
32	փնտրում եմ նոր աշխատանք՝ ոչ միայն իմ մասնագիտությամբ	**14,5%**	14,3%	22.9%	30.4%	22.5%	0%
33	Աշխատանք չեմ փնտրում	**8,9%**	10,8%	22.9%	30.4%	22.5%	7.4%

Ինչպես երևում է աղյուսակ 9-ի վերլուծությունից, իրենց մասնագիտությամբ իրենց կրթությունը շարունակելու են շինարարության ֆակուլտետի, իսկ ամենաքիչը՝ դիզայնի ֆակուլտետի շրջանավարտները: Այլ բուհում իրենց հետագա կրթությունը շարունակել ցանկացող ուսանողներն ամենամեծ թիվն են կազմում կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետում՝ ի տարբերություն շինարարության և դիզայնի ֆակուլտետների: Հարցմանը մասնակցած շրջանավարտների մեծ մասն աշխատանք է փնտրում իր մասնագիտությամբ, իսկ ընդհանրապես ոչ մի աշխատանք չեն փնտրում, ընդ որում՝ կառավարման և տեխնոլոգիայի և քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետների ուսանողները:

Կրթությունը շարունակել չցանկացող շրջանավարտները ներկայացրել են նաև այն հիմնական պատճառները, որոնք ազդել են իրենց որոշման վրա:

Հարցվածների 55%-ը նշել են հետևյալ հիմնական պատճառները՝ համալսարանում իրենց կրթությունը չշարունակելու համար (Աղյուսակ 10).

1. սոցիալական՝ վարձավճարի հետ առնչվող խնդիրներ, անվճար տեղի բացակայություն – 30%,
2. կրթությունը շարունակելու հեռանկարներ չեն տեսնում –35%,
3. Կարծում են բավարար է, աշխատելու են ու մասնագիտական փորձ հավաքեն –7%,
4. կարծում են մասնագիտությունը հեռանկարային չէ –13%,
5. մեկնելու են երկրից կամ ուսումը շարունակելու են արտերկրում – 3%,
6. Կշարունակեն կրթությունը մեկ կամ մի քանի տարի անց-5%
7. մեկնելու են զինվորական ծառայության – 1%
8. Այլ մասնագիտություն եմ ընտրելու-3%

Աղյուսակ 10. Հարցվածների կողմից ուսումը չշարունակելու հիմնական պատճառները ըստ ֆակուլտետների

Հարցվածներ	Սոցիալական՝ վարձավճարի հետ առնչվող խնդիրներ	Կարծում եմ, որ մասնագիտությունս հեռանկարային չէ	Կրթությունս շարունակելու հեռանկարներ չեմ տեսնում	Կարծում եմ կրթությունս բավարար է	Կշարունակեմ 1 կամ մի քանի տարի անց
Ընդհանուր	**30%**	**13%**	**35%**	**7%**	**5%**
Դիզայնի ֆ.	34%	13%	40%	44%	50%
Քաղ. տնտ. և էկ. ֆ.	13%	31%	20%	0%	17%
Կառավարման և տ. ֆ.	24%	20%	31%	11%	17%
Ճարտարապետության ֆ.	18%	0%	9%	22%	0%
Շինարարության ֆ.	11%	17%	0%	22%	17%

Կրթությունը չշարունակելու հիմնական պատճառների շարքում ամենամեծ կշիռն ունի կրթությունը

շարունակելու հեռանկարներ չտեսնելը, ընդ որում այս պատճառը կարևորել են հատկապես դիզայնի ֆակուլտետի (40%) և Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտները (31%):
Ընդ որում, սոցիալական՝ վարձավճարի հետ առնչվող խնդիրների պատճառով իրենց կրթությունը չեն շարունակելու հատկապես Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտները՝ (32%):
Հարցման մասնակիցները նշել են նաև նախընտրելի մասնագիտությունները/աշխատանքային ոլորտները, որոնք ներկայացվում են ստորև (Աղյուսակ 11) ընդ որում շրջանավարտների մեծ մասը՝ 66%-ը, նախընտրում է իրականացնել մասնագիտական աշխատանք: Հարցման մասնակիցների 5%-ը նախընտրում է ունենալ անձնական բիզնես, իսկ շրջանավարտների 13%-ի համար ապագա աշխատանքի ոլորտը կարևոր չէ, իսկ 7%-ը նախընտրում է աշխատել բանկային համակարգում: Հարցման մասնակիցների 4%-ը ցանկանում է աշխատել որպես քաղ-ծառայող:

Աղյուսակ 11. Հարցվածների կողմից մատնանշված նախընտրելի մասնագիտությունները/աշխատանքային ոլորտները:

N	Աշխատանքային ոլորտ	Համաբուհական %
1	Միջավայրի դիզայն, ինտերիեր, էքստերիեր, գրաֆիկ.	5%
2	Ճարտարապետ - դիզայներ	6%
3	Տնտեսագետ (Ֆինանսական, բանկային, վարկային, հաշվապ., աուդիտ)	12%
4	Շինարարություն	7%
5	ՏՏ, Համակարգչային, ցանցային ադմինիստրատոր, ծրագրավորող, ավտոմատացում	3%
6	Կառավարում/մենեջմենթ, բիզնես, մարքեթինգ, առևտուր	3%
7	Շենքերի/կոնստրուկցիաների նախագծում, կոնստրուկցիա	1%
8	Պետական ղեկավար և կառավարման մարմիններ	5%
9	Գեոդեզիա	1%
10	Տուրիզմ, տուրիստական ընկերություն, գիդ	1%
11	Քաղաքային տնտեսություն և ՋԳՄՕ	1%
12	Անձնական բիզնես	6%
13	Արտակարգ իրավիճակներ, անվտանգություն	1%
14	Անշարժ գույքի փորձաքննություն, գնահատում, կառավ-մ	1%
15	Գազպրոմ Արմենիա	1%
16	Արդեն ունեմ իմ նախընտրած աշխատանքը	1%
17	Մշակույթ, թանգարան	1%
18	Դեռ չեն որոշել	25%
19	Չեն պատասխանել այս հարցին	19%

7. Եզրակացություններ

Իրականացված հարցման արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. Կրթական գործընթացների առումով.

- հարցմանը մասնակցած շրջանավարտ ուսանողները հիմնականում գոհ են համալսարանի կրթական գործընթացների որակից և մակարդակից, մասնավորապես, ուսանողները գոհ են դասախոսների գիտելիքներից, դասախոսների հետ անմիջական հաղորդակցությունից, գնահատման համակարգից, նրանք նաև ապագա ուսանողներին խորհուրդ կտային ընտրել իրենց մասնագիտությունը/կրթական ծրագիրը:
- միաժամանակ, ավարտող ուսանողները լիովին բավարարված չեն իրենց կրթական ծրագրից և կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից, նաև, մասամբ են համաձայն, որ կրթական ծրագիրը իրենց հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ու պահանջարկ ունեցող մասնագետ:

2. Կրթական գործընթացների բարելավման առումով, հարցման մասնակիցները ներկայացրել են

մի շարք առաջարկներ, մասնավորապես.

- կրթական ծրագրերի և դասընթացների վերամշակում և վերակազմում, դրանց արդյունավետության և մասնագիտացման բարձրացում, մասնագիտական առարկաների ավելացում,
- կրթության գործնական մասի և ուսումնական/արտադրական պրակտիկաների ավելացում,
- լաբորատորիաների վերազինում, տեխնիկական համալրում, մասնագիտական լսարանների ստեղծում,
- դասախոսական կազմի բարելավում, հաճախակի վերապատրաստում, երիտասարդ և գիտակ դասախոսների թվի ավելացում:

3. Կարողությունների և հմտությունների զարգացման առումով հարցման մասնակիցներն առավել բավարարված են իրենց ձեռք բերած նախագծման և տվյալների հավաքագրման/վերլուծության կարողությունների որակով: Սակայն, հարցվածները գոհ չեն օտար լեզվով հաղորդակցության և նախագծի կառավարման ու մենեջմենթի բնագավառներում իրենց ձեռք բերած կարողություններից:
4. Ծառայությունների առումով, հարցվածները մասամբ գոհ են լսարանային պայմաններից և սարքավորումներից, գրադարանից և համակարգչային լաբորատորիաներից: Միաժամանակ, հարցվածները դժգոհ են Կարիերայի կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններից:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Շրջանավարտների հարցման հարցաթերթ

- *Հարգելի շրջանավարտ, շնորհակալություն ենք հայտնում այս տարիների համագործակցության համար և ակնկալում ենք, որ այն շարունակական բնույթ կկրի,*
- *Խնդրում ենք ներկայացնել Ձեր կարծիքը համալսարանի գործունեության վերաբերյալ,*
- *Այդպիսով Դուք կնպաստեք համալսարանի կրթական և օժանդակ գործընթացների բարեփոխմանը:*

1. Ծննդյան տարեթիվ՝ _____ թ.
2. Սեռ՝ 1 իգական 2 արական
3. Քաղաքացիություն՝ 1 Հայաստանի Հանրապետություն 2 Այլ, նշել _____
4. Մշտական բնակության վայր (քաղաք, երկիր)՝ _____
5. Ո՞ր թվականին եք ընդունվել համալսարան՝ _____ թ.
6. Ձեր ուսուցման ձևը՝ 1 Առկա 2 Հեռակա
7. Ձեր կրթական աստիճանը՝ 1 Բակալավրիատ 2 Մագիստրատուրա
8. Ձեր մասնագիտությունը՝ _____
9. Դուք ընտրել եք Ձեր մասնագիտությունը՝
   1 Ծնողների/ընկերների/ծանոթների խորհրդով
   2 Սեփական որոշմամբ
   3 Այլ, նշել _____

Ի՞նչ չափով եք համաձայն հետևյալ պնդումների հետ.

Հ.	Պնդումներ	Համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Համաձայն չեմ
10.	Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով:	(1)	(2)	(3)
11.	Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից:	(1)	(2)	(3)
12.	Իմ կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ու պահանջարկ ունեցող մասնագետ:	(1)	(2)	(3)
13.	Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների, պահանջների և վերջնարդյունքների մասին:	(1)	(2)	(3)
14.	Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար:	(1)	(2)	(3)
15.	Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն:	(1)	(2)	(3)
16.	Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ:	(1)	(2)	(3)
17.	Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/ կրթական ծրագիրը իմ բուհում:	(1)	(2)	(3)
18.	Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների բնագավառներում:	(1)	(2)	(3)

19. Իմ կրթական ծրագիրը կարող էր բարելավվել, եթե.

   1 _____,
   2 _____

Որքանո՞վ է համալսարանում կրթությունը նպաստել Ձեր՝ հետևյալ կարողությունների զարգացմանը.

ՀՀ՝	Կարողություններ	Մեծապես նպաստել է	Մասամբ է նպաստել	Բոլորովին չի նպաստել
20.	Նախագծում	(1)	(2)	(3)
21.	Տվյալների հավաքագրում և վերլուծություն	(1)	(2)	(3)
22.	Համակարգչային ծրագրերի օգտագործում	(1)	(2)	(3)
23.	Նախագծի կառավարում (մենեջմենթ)	(1)	(2)	(3)
24.	Առաջնորդություն	(1)	(2)	(3)
25.	Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում	(1)	(2)	(3)
26.	Հաղորդակցություն և հրապարակային ելույթ	(1)	(2)	(3)
27.	Գրավոր շարադրանք	(1)	(2)	(3)
28.	Օտար լեզվով հաղորդակցություն	(1)	(2)	(3)

Խնդրում ենք գնահատել բուհի հետևյալ ծառայությունների որակը.

ՀՀ՝	Ծառայություններ	Բավա-րարված եմ	Մասամբ բավարար-ված եմ	Բավա-րարված չեմ
29.	Լսարանային պայմաններ և սարքավորումներ	(1)	(2)	(3)
30.	Համակարգչային լաբորատորիաներ, ինտերնետ, էլ. փոստ	(1)	(2)	(3)
31.	Կարիերայի կենտրոնի աջակցություն՝ աշխատանք գտնելու գործում	(1)	(2)	(3)
32.	Ֆինանսական աջակցություն, ներառյալ՝ կրթաթոշակներ, զեղչեր	(1)	(2)	(3)
33.	Գրադարան	(1)	(2)	(3)
34.	Հանրակացարան	(1)	(2)	(3)
35.	Բուֆետ, սննդի տրամադրում	(1)	(2)	(3)
36.	Տրանսպորտ	(1)	(2)	(3)
37.	Մեքենայի կայանատեղի	(1)	(2)	(3)
38.	Առողջապահական ծառայություններ	(1)	(2)	(3)
39.	Մշակութային և այլ միջոցառումներ	(1)	(2)	(3)
40.	Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,	(1)	(2)	(3)
41.	Այլ, նշել	(1)	(2)	(3)

42. Դուք աշխատու՞մ եք և ի՞նչ կարգավիճակով.
   - [1] ունեմ հիմնական աշխատանք՝ լրիվ կամ կես դրույքով
   - [2] աշխատում եմ գործարքային հիմունքներով
   - [3] չեմ աշխատում

43. Համալսարանն ավարտելուց հետո ի՞նչ պլաններ ունեք կրթության կամ աշխատանքի առումով.
   - [1] շարունակելու եմ կրթությունս իմ բուհում, իմ մասնագիտությամբ
   - [2] շարունակելու եմ կրթությունս այլ ԲՈՒՀ-ում կամ այլ մասնագիտությամբ
   - [3] փնտրում եմ նոր աշխատանք՝ միայն իմ մասնագիտությամբ
   - [4] փնտրում եմ նոր աշխատանք՝ ոչ միայն իմ մասնագիտությամբ
   - [5] աշխատանք չեմ փնտրում

44. Եթե չեք շարունակելու Ձեր կրթությունը, խնդրում ենք նշել պատճառը.
   - [1] Սոցիալական՝ վարձավճարի հետ առնչվող խնդիրներ
   - [2] Կարծում եմ, որ մասնագիտությունս հեռանկարային չէ
   - [3] Կրթությունս շարունակելու հեռանկարներ չեմ տեսնում
   - [4] Այլ, նշել _____

45. Ո՞րն է ձեր նախընտրելի ապագա աշխատանքը/ոլորտը՝ _____

Շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար և ակնկալում ենք, որ հետագայում Դուք մշտապես կապ կպահպանեք Ձեր համալսարանի հետ: